«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ-« Ընթերցանության ակտիվ գործընթացի կազմակերպումը տարրական դասարաններում»:

ԱՌԱՐԿԱ՝ Դասվար

ՀԵՂԻՆԱԿ՝ Կարինե Քոչարյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Թթուջուր գյուղի միջնակարգ դպրոց

Սևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……2

ԳԼՈՒԽ 1. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

1.1Կարդալու խնդիրներն ու նպատակները տարրական դասարաններում……..6

1.2Տարրական դասրաններում կարդալու կարողության ձևավորման մեթոդական քայլաշարը…….8

1.3 Կարդալու տեսակները: Նրանց դերը կարդալու որակական հատկանիշների ձևավորման գործում…….16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ……23

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……..25

Ներածություն

Ընթերցանության հմտությունների և կարողությունների ձևավորումը և զարգացումը ամենակարևոր գործընթացներից մեկն է:

Մարդը իրեն անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը ձեռք է բերում գրավոր տեքստերի հետ շփման, այսինքն՝ ընթերցանության միջոցով: Սակայն ոչ միշտ է հաջողվում աշակերտների մոտ արթնացնել սեր ընթերցանության նկատմամբ: Երևի դրա հիմնական պատճառներից մեկն էլ կարելի է համարել ոչ ճիշտ և ոչ արդյունավետ մեթոդների ընտրությունը:

Ընթերցողական կարողության ձևավորման գերխնդիրն է ձևավորել այնպիսի ընթերցող, որը կարդալու ընթացքում ձեռք բերած տեղեկությունը կմշակի, կիմաստավորի և ճիշտ կօգտագործի: Ընթերցելու կարողությունը ընդգրկում է երկու կողմ՝ ընթերցանության տեխնիկան և ընթերցածի բովանդակության ընկալումը: Ընթերցանության տեխնիկան գիտելիքի, ինչպես նաև հետագա ուսումնական կարողությունների հիմքն է, քանի որ բովանդակության լիարժեք ընկալումը հնարավոր է միայն տեխնիկապես վարժ ընթերցելու դեպքում: Իսկ ընթերցանության բովանդակության ընկալումն էլ իր հերթին կարող է խթանող դեր կատարել, մղել ընթերցանության: Ընթերցանության նկատմամբ հետաքրքրությունը խթանող մի շարք մեթոդներ կան, սակայն այդ մեթոդների ոչ ճիշտ և ոչ արդյունավետ կիրառումը հաճախ տալիս է հակառակ արդյունքը, այսինքն՝ երեխան չի ցանկանում ընթերցել: Մեր հետազոտության մեջ մենք անդրադարձել ենք մի շարք մեթոդների, որոնք կնպաստեն ընթերցանությունը տարրական դասարաններում ակտիվ գործընթաց դարձնելուն, և կնպաստեն ընթեցողական կարողությունների զարգացմանը:

Մեր ուսումնասիրության թեման՝ «Ընթերցանության ակտիվ գործընթացի կազմակերպումը տարրական դասարաններում»:

Ուսումնասիրության թեմայի արդիականությունը: Այսօրվա իրականությունը, ցավոք սրտի, ստիպում է մեզ բախվել այն իրականությանը, որ աշակերտները սկսում են հեռանալ ընթերցանությունից: Այսօր շատ քիչ երեխաներ են գիրքը վերցնում և սկսում կարդալ: Իսկ ի՞նչ

անել, ինչպիսի՞ մեթոդներ կիրառել, որպեսզի հետաքրքիր դարձնենք կարդալու գործընթացը, որպեսզի աշակերտների մեջ սեր արթնացնենք դեպի գիրքն ու գրականությունը: Մեր ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է այսօր աշակերտների քիչ կարդալու հանգամանքով, միաժամանակ հմտորեն կարդալու անհրաժեշտությամբ և այդ ուղղությամբ մեթոդական ցուցումների բացակայությամբ կամ ոչ արդյունավետ կիրառմամբ:

Հետազոտության օբյեկտը: Մեր հետազոտության օբյեկտը տարրական դասարաններում կազմակերպվող մայրենիի դասերն են՝ կարդալու կարողության ձևավորման տեսանկյունից:

Հետազոտության առարկան: Մեր հետազոտության առարկան տարրական դասարաններում մայրենիի դասերի ընթացքում կարդալու կարողության զարգացման գործընթացում կիրառվող մեթոդների արդյունավետության ուսումնասիրության գործընթացն է:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա բացահայտել կարդացածը հասկանալու կարողության ձևավորման մեջ կիրառվող մեթոդների արդյունավետությունը և նախանշել կատարելագործման այն ուղիները, որոնք կարող են ապահովել մեթոդների արդյունավետ կիրառումը: Նշված նպատակի իրագործման համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել թեմայի վերաբերյալ մեթոդական և վերլուծական աշխատությունները:
- Ուսումնասիրել մայրենիի դասերի ընթացքում կարդալու կարողության ձևավորման դրվածքը տարրական դպրոցում և վերլուծել արդյունքները:
- Մշակել և փորձարկել ընթերցանության գործընթացի այնպիսի մեթոդական քայլաշար, որը կնպաստի երեխաների կարդալու կարողության զարգացմանը:

Այսպիսով՝ ընթերցանությունը տարրական դասարաններում ակտիվ գործընթաց դարձնելու կարդալու կարողությունը զարգացնելու համար անչափ կարևոր է ընթերցվող նյութի, գրականության նկատմամբ հետաքրքրության առաջացումը: Իսկ հետաքրքրության առաջացման համար կարևոր է ճիշտ մեթոդական շղթա նախապատրաստել, ընտրել այնպիսի մեթոդներ և հարցեր որոնք ընթերցողին կստիպեն մտածել դեպքերի հետագա զարգացման մասին և ընթերցել տեքստը:

Մեթոդները.

- Գրականության ուսումնասիրում և հիմնական սկզբունքների ներկայացում,
- փորձարարական դասերի վարում և արդյունքների վերլուծություն,
- դասալսումներ և արդյունքների քննարկում,

Աշխատանքի նորույթը: Մեր գիտական աշխատանքի նորույթն այն է, որ մշակել ենք մայրենիի դասագործընթացում կարդալու կարողության ձևավորման տեսական և գործնական մոտեցումներ:

Ուսումնասիրության տեսական նշանակությունը: Ուսումնասիրել և մշակել ենք հիմնախնդրի վերաբերյալ տեսական մոտեցումներ, առաջարկել ենք մոտեցումներ կարդալու կարողության ձևավորման գործընթացում կիրառվող մեթոդիների արդյունավետության վերաբերյալ:

Ուսումնասիրության գործնական նշանակությունը : Հիմնախնդրի շուրջ մեր կատարած ուսումնասիրությունների արդյունքները կարող են կիրառվել տարրական դասարաններում մայրենիի դասերի ժամանակ:

Հետազոտության օբյեկտը : Մեր հետազոտության օբյեկտը տարրական դասարաններում կազմակերպվող մայրենիի դասերն են՝ կարդալու կարողության ձևավորման տեսանկյունից

Հետազոտության առարկան : Տարրական դասարաններում մայրենիի դաերի ընթացքում կարդալու կարողության զարգացման գործընթացում կիրառվող մեթոդների արդյունավետության ուսումնասիրության գործընթացն է:

Թեզի կառուցվածքը և ծավալը: Մեր աշխատանքը բաղկացած է ներածությունից, 1 գլխից, եզրակացություններից և գրականության ցանկից: Հետազտության ծավալը կազմում է 25 էջ:

ԳԼՈՒԽ 1

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

1.1 ԿԱՐԴԱԼՈՒ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Շատ պատասխանատու և բարդ աշխատանք է սովորողի մեջ ձևավորել կարդալու կարողություն: Այն բարդ գործընթաց է, քանի որ կարդալու համար միայն տառերը ճանաչելն ու տարբերակելը դեռևս բավական չէ, պետք է նաև տեսողական տպավորությունները վերածել ձայնական և հնչյունային տպավորությունների: Այս բարդ ու բազմակողմանի աշխատանքի ընթացքում յուրաքանչյուրը պետք է իր առջև դնի մի շարք խնդիրներ ու նպատակներ: Այս խնդիրներն ու նպատակներն իրագործելը հատկապես բարդ է տարրական դասարաններում,այն էլ այն դեպքում երբ երեխան դեռ նոր-նոր է սկսում ծանոթանալ տառերին:

Այստեղ Ջ. Գյուլամիրյանը նշում է մի կարևոր հանգամանք, որն է **տարրական դպրոցում մայրենիի դասի գլխավոր նպատակը երեխաներին կարդալու բոլոր որակական հատկանիշների պահպանմամբ կարդալ սովորեցնելն է, ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը և ընթերցողական կարողությունների ձևավորումը: Ինչպես նշված, այնպես էլ մայրենի լեզվի քերականությունից տարրական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը դիտվում է որպես գրավոր և բանավոր գրագետ խոսք կառուցելու, լեզվամտածողության և հայեցի հոգեկերտվածքի ձևավորման, ազգային արժեքների ձեռքբերման կարևոր գործնական միջոց**[1]:

Աշոտ Տեր-Գրիգորյանը կարծում էր,որ **ընթերցանությունը տարրական դասարաններում մայրենի լեզվի գործնական ուսուցման, կարդալու կարողության մշակման ու կատարելագործման, գաղափարական ու գեղագիտական դաստիարակության նպատակներ է հետապնդում: Նա նշում**

[1]Տե՛ս՝ Ջ. Գյուլամիրյան , Մայրենիի ընթերցանության մեթոդիկա, Երևան, 2015 թ., էջ 95:

էր, որ ընթերցանության դասը բազմաբնույթ աշխատանքների ամբողջ համակարգ է, որտեղ լեզվական ճանաչողական, տեխնիկական ու դաստիարակչական խնդիրները միաձուլվում են, կապվում միմյանց հետ[2]: Պրոֆ. Ջ. Գյուլամիրյանը առանձնացնում և կարևորում է տարրական դպրոցում մայրենիի ուսուցման հետևյալ հիմնական խնդիրները՝

- Ձևավորել և դասարանից դասարան զարգացնել երեխաների կարդալու կարողությունները (որակական հատկանիշների պահպանմամբ):
- Մաքրել, հղկել և հարստացնել նախադպրոցական տարիքում և գրաճանաչության ողջ ընթացքում երեխաների ձեռք բերած բառապաշարը, զարգացնել կապակցված խոսք կառուցելու (գրավոր և բանավոր) ունակությունը;
- Ձևավորել հաղորդակցական կարողություններ, բարեկիրթ խոսքի մշակույթ:
- Ձևավորել փոքրածավալտարաբնույթ ստեղծագործություններ ընթերցելու, դրանց հիմնական գաղափարը հասկանալու, ենթատեքստը կռահելու կարողություններ:

Այս խնդիրներն առանձնացնելուց հետո մեր առաջ նպատակ ենք դնում, որ աշակերտը մեր օգնությամբ կարողանա անսխալ կարդալ և հասկանալ բնագիրը, կատարել աշխատանք բնագրի շուրջ: Ընդ որում արդի դարաշրջանում աշակերտը ոչ թե պետք է լինի պասիվ լսողի դերում, իսկ ուսուցիչը իր գիտելիքը հաղորդի աշակերտին և նա դա անառարկելիորեն ընդունի, այլ աշակերտը պետք է լինի ակտիվ գործընկեր,կարողանա արտահայտել սեփական կարծիքն ու գաղափարները: Այսպիսով՝ եթե բավարար չափով ձևավորված է կարդալու կարողությունը, ապա ընթերցված բնագրի շուրջ իրականացվող մեթոդապես ճիշտ աշխատանքի շնորհիվ ընթերցանությունը դառնում է նաև անձի ճանաչողական

[2]Տե՛ս Ա. Տեր-Գրիգորյան, Մայրենի լեզվի դասը տարրական դասարաններում,Երևան, 1983 թ, էջ 75:

հետաքրքրությունների, բազմաբնույթ պահանջմունքների բավարարման, բազմակողմանի զարգացման միջոց:

Հենց այս պատճառով է, որ ուսուցման սկզբնական փուլում հիմնական ուշադրությունը դարձվում է կարդալու, մասնավորապես հասկանալով կարդալու կարողության ձևավորմանը:

1.2 ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԿԱՐԴԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՔԱՅԼԱՇԱՐԸ

Այսօր արդեն տառաճանաչ դարձած առաջին դասարանցին կորցնում է հետաքրքրությունը կարդալու հանդեպ,քանի որ ներկայումս երեխաների հետաքրքրությունները բոլորովին այլ են: Կարդալը երեխան համարում է ամենադժվար և ձանձրալի աշխատանքը: Այստեղ հարց է առաջանում՝ ինչ անել, որպեսզի կարողանանք հետաքրքրություն առաջացնել և ստիպել երեխային ընթերցել, սեր արթնացնենք նրա մեջ դեպի ընթերցանությունը, զարգացնենք երեխայի կարդալու կարողությունը: Իսկ ինչ է նշանակում կարդալու կարողություն: Կարդալ բառերը դեռևս չի նշանակում լավ կամ կարդալ: Պրոֆ. Ջ.Գյուլամիրյանը նշում է, որ **ուսուցման այբբենական շրջանում ձևավորվում է երեխայի կարդալու նախնական կարողությունը: Նրանք կարողանում են կարդալ փոքրածավալ բնագրեր, պատասխանել բնագրի վերաբերյալ ուսուցչի տված հարցերին և դրանց օգնությամբ վերարտադրում են բնագրի բովանդակությունը: Նախնական փուլում կարևորվում է բարձրաձայն ընթերցանությունը:**

Իսկ արդեն վարժ և հստակ կարդալու համար Գյուլամիրյանը առաջ է քաշում հետևյալ բաղադրամասերը՝

- **Ճիշտ կարդալ**
- **Հասկանալով կարդալ**
- **Սահուն կարդալ**
- **Արտահայտիչ կարդալ**

- Արագ կարդալ

  Այս հատկանիշների պահպանմամբ ընթերցանությունը դառնում է ակտիվ գործընթաց[3]:

Քանի որ տարրական դասարաններում մայրենիի դասի հիմնական նպատակը կարդալ սովորեցնելն է և ընթերցողական կարողության ձևավորումը, ուստի սկզբնական փուլում շեշտը դրվում է հասկանալով կարդալու կարողության ձևավորման վրա: Հաճախ աշակերտները չեն հասկանում նոր ընթերցված նյութը, և այդ բացը լրացնելու համար անհրաժեշտ է կատարել երկկողմանի աշխատանք: Կարդալու կարողության մշակման արդյունավետությանը նախնական փուլում հատկապես նպաստում է բարձրաձայն ընթերցանությունը:

Այն ընթերցանությանը տալիս է զարգացնող բնույթ: Ըստ Գյուլամիրյանի՝ կարդալու հմտության ձեռք բերման բուրգի ընդհանուր աստիճանների մեջ առանձնանում է 5 քայլ: Այդ քայլերից առաջին երկուսը նպաստում են տեքստի հնչյունաբառային ըմբռնմանը, նրա վերարտադրմանը, ակտիվանում են խոսքի ըմբռնողական մեխանիզմները: Բառային ընթերցանության աստիճանում էականորեն զարգանում է կարդացած բառի և մտքի կապերի ընկալումը. զուգորդվում է լսված բառի և նրա իմաստի հասկացությունը: Բուրգի երրորդ աստիճանում նախադասություններով կարդալու ժամանակ կարդացածի ընկալման միավորը մեծանում է, կարդալու տրամաբանական կողմը հասնում է բարձր աստիճանի: Այս աստիճանում ընթերցողը ենթադրում է՝ կռահում, թե ինչի մասին պիտի լինի շարունակությունը: Կարդացողի վարպետության բարձր մակարդակը պայմանավորված է լայն ընթերցողական դաշտի ձևավորվածությամբ. ընթերցողն սկսում է արագ տեսնելն կարդալ ամբողջական էջեր[4]:

Միքայել Նալբանդյանը գտնում էր, որ <<կարդալը հարստացնում է մարդու միտքը, խոսելու մեջ վարժվելը հաջողագյուտ է անում նրան, իսկ

[3]Տե՛ս Ջ. Գյուլամիրյան նշվ. աշխ. , էջ 99

[4]Տե՛ս Ջ. Գյուլամիրյան, նշվ. աշխ., Երևան, 2018 թ, էջ 111:

գրելը սովորեցնում է ճշգրտություն>>: Մայրենիի ուսուցման կարևոր նպատակներից մեկը Նալբանդյանը համարել է ընթերցանությունը՝ որպես օրինակելի և կանոնավոր խոսքի ընդօրինակման, գիտելիքների հայթայթման, բառապաշարի հարստացման ու մտահորիզոնի ընդլայնման միջոց[5]:

Շատ փորձեր և ուսումնասիրություններ հաստատել են, որ մեկ տող կարդալիս հմուտ ընթերցողը կանգ է առնում 3-6 անգամ, որոնց ժամանակ տեղի են ունենում կարդացածի գիտակցում՝ հասկացում և ըմբռնում: Անհասկանալի մտքի կամ բառի դեպքում ընթերցողի աչքերը կրկնում են շարժումը՝ վերադառնալով ընթերցածին:

Ընթերցանության մեջ հմտանալու համար փոքրիկը պետք է կարողանա տեսնել բնագրի հիմնական հատվածը: Կարդալու հմտությունները ձևավորվում են երեք փուլով: Այդ փուլերն են՝

- Վերլուծական
- Համադրական
- Ավտոմատացված

Առաջին փուլում փոքրիկը ձգտում է կարդալ: Տեսողական միավոր է դառնում տառը կամ վանկը. տեսադաշտը սահմանափակ է, վանկերը միացնելու և բառերը կարդալու համար շատ ժամանակ է պահանջվում, առաջին վանկը կարդալուց հետո փոքրիկը փորձում էգուշակել բառը:

Երկրորդ փուլում փոքրիկը ձգտում է սահուն կարդալ: Կարդալու ամենափոքր միավորը դառնում է բառը, շարունակում է զարգացնել գուշակելու գործընթացը, բառերը փոխարինում է իմաստով մոտ այլ բառերով:

Երրորդ փուլում փոքրիկն արդեն սահուն կարդում է: Այս փուլում կարդալու ամենափոքր միավորը դառնում է նախադասությունը, բնագրի որոշակի հատվածն ընկալվում է ավելի արագ քան արտաբերվում է, կանխագուշակման հավանականությունը դառնում է անսխալ:

[5]Տե՛ս Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ Թ , Ե, 1948, էջ 45:

Կարդալը 6-7 տարեկան երեխայի համար բարդ աշխատանք է, որն իրականանում է բազմաթիվ հոգեկան գործընթացների միջոցով, ինչպիսիք են՝ ուշադրություն, մտածողություն, հիշողություն, կամք, զգացմունք և այլն:

Առաջին դասարանցին, ուշադրությունը բևեռելով կարդալու մեխանիկական կողմին , միշտ չէ, որ հասկանում է իր կարդացածը, այդ պատճառով էլ նա մի քանի անգամ կրկնում է վանկերը կամ բառերը: Շատ հաճախ նրանք առանձին բառեր ոչ թե կարդում են, այլ գուշակում՝ կարդալով միայն դրանց առաջին վանկը: Երեխայի կարդալու հմտության հետ մեկտեղ այս երևույթն աստիճանաբար անհետանում է: Սակայն մինչև հմուտ կարդալ սովորեցնելը, տարվում են բազմապիսի աշխատանքներ, և տրվում են բազմաթիվ առաջադրանքներ: Այդ առաջադրանքներից են՝

- **Տեքստի ամբողջական ընթերցում**
- **Հատվածներով ընթերցանություն**
- **Մեկնաբանություններով ընթերցանություն**
- **Շարունակելով ընթերցանությունև** այլն:

Այստեղ Ջ. Գյուլամիրյանը նշում է մի կարևոր հանգամանք, որ շարունակելով կարդալու ժամանակ չի կարելի ընդհատել երեխայի ընթերցանությունը և մեկ ուրիշին պատահական հատվածից շարունակել տալ: Անհրաժեշտ է թույլ տալ, որ կարդացողը հասնի մտքի տրամաբանական ավարտին, նոր հանձնարարել մեկ այլ աշակերտի կարդալ[6]:

Բացատրելով կամ մեկնաբանելով կարդալն իրագործվում է կարդացած նյութի բովանդակությունը կամ մտքերը բացատրելով ու մեկնաբանելով, քննարկելով գործող անձանց վարքը, արդարացնելով կամ մեղադրելով նրանց, բառային աշխատանք կատարելով, բառերի ուղղագրությունը բացատրելով, կետադրությունը մեկնաբանելով և այլն: Այստեղ ուսուցիչը պետք է ճիշտ պլանավորի աշխատանքը, որպեսզի ճիշտ արդյունքի հասնի[7]:

Աշոտ Տեր Գրիգորյանը կարծում էր, որ տարրական դասարաններում ընթերցանությունը տարվում է ամբողջ-մաս-մաս-ամբողջ սխեմայով, որն

[6]Տե՛ս Ջ. Գյուլամիրյան, նշվ. աշխ. , Երևան 2018, էջ 99-115:
[7]Տե՛ս նույն տեղում:

ընդհանուր է բոլոր ժանրերի նյութերի համար: Այս նշանակում է, որ ուսուցիչը կարդալու կամ պատմելու միջոցով աշակերտներին ծանոթացնում է ամբողջ նյութին, որը հենց այդ ամբողջությամ մեջ է, որը նրանց վրա անհրաժտ տպավորություն կարող է թողնել: Այնուհետև այդ ամբողջության ուսումնասիրությունը կատարվում է տրամաբանական ավարտվածություն ունեցող մասերով կամ հատվածներով, որպեսզի նյութի խոր ու բազմակողմանի յուրացումը հեշտանա: Պրոֆեսորը գտնում է, որ եթե ամբողջ նյութն ըստ առանձին մասերի ուսումնասիրված է, աշակերտները սովորել են այն լավ կարդալ, բառերն ու մտքերը բացատրել, գործող անձերին ճիշտ բնութագրել, ապա բովանդակության վերարտադրման համար նորից վերցվում է ամբողջ նյութը, որպեսզի հենց այս ամբողջության վրա աշակերտները սովորեն պատմել, ընդհանրացումներ և եզրակացություններ անել[8]:

Այս բոլոր քայլերի իրականացումից հետո էլ ընթերցանությունը չի դառնում ակտիվ գործընթաց: Պարզվում է, որ երեխաները տիրապետելով բառաճանաչության հմտությանը, չգիտեն թե ինչպես կարդան, որ կենտրոնանան մտքերի վրա: Պատճառը պարզ է՝ պարզապես նրանք ուշադիր չեն կարդում: Ընթերցանությունը դառնում է ակտիվ գործընթաց, երբ աշակերտը մտածում է կարդացածի մասին: Չափազանց կարևոր է ընթերցվող նյութի ճիշտ ընտրությունը: Այն պետք է համապատասխանի սովորողի տարիքային առանձնահատկորթյուններին, հետաքրքրություններին: Պետք է ճիշտ մեթոդներ ու ձևեր ընտրվեն, ճիշտ հարցեր մշակվեն ու կատարվեն տեղին քննարկումներ: Այս ձևով նյութը կյուրացվի աշակերտի կողմից: Այստեղ պրոֆեսոր Ջ. Գյուլամիրյանը նշում է, **որ միայն վերընթերցելով և ուսուցչի հետ միասին դիտարկելով կարդացած բնագիրը՝ աշակերտները կբացահայտեն իրենց համար նոր, դեռևս անծանոթ գաղափարներ, մտքեր,հեղինակային մտահաղացումներ և կերպարներ,**

[8]Տե՛ս Աշոտ Տեր Գրիգորյան, Մայրենի լեզվի դասը տարրական դասարաններում, Երևան, 1983, էջ 75-78:

արարքների, մենախոսությունների ու երկխոսությունների տակ թաքնած ենթատեքստերը: Այս աշխատանքն աշակերտներին հանգեցնում է այն համոզման, որ ստեղծագործության ուշադիր կարդալը, վերընթերցելը հետաքրքիր է[9]:

Այսքանից հետո աշակերտների կողմից կարդացած ստեղծագործության բովանդակության լիարժեք հասկացվածությունը նպաստում է, որ ընթերցողն առավել ուշադիր վերաբերվի բնագրի յուրաքանչյուր տողին, արտահայտությանը, բառին: Հարկավոր է աշակերտներին սովորեցնել ընթերցել դանդաղ և կարդալու ընթացքում կենտրոնանալ՝ մտածելով յուրաքանչյուր բառի շուրջ: Կարդալուց և բառային աշխատանքից հետո հարկավոր է աշակերտներին մղել ստեղծագործության մտքերի, գաղափարների, գործող անձանց գործողությունների և դատողությունների շուրջ բանավեճի, նրանց կողմից բնագրի ենթատեքստի ընկալմանը:

Այսքանից հետո պարզ է դառնում, որ կարդալ, դեռ չի նշանակում հասկանալ: Կարևոր է կարդացածը հասկանալ: Իրեն հասկանալի տեքստը հասկանալի ներկայացնել դիմացինին: Կարդալիս առանձնացնել հիմնական ասելիքը, միտքը, գաղափարը, ենթատեքստը:

Բառարանի օգնությամբ բացատրել անծանոթ բառն ու դարձվածքը, գտնել հանդիպած բառերի հոմանիշներն ու հականիշները, պատմելիս դրանք փոխարինել համապատասխան բառով կամ արտահայտությամբ: Իհարկե միայն դասագիրքը չի կարող լինել ուսումնական միակ կամ գլխավոր նյութը, տեղեկատվության միակ աղբյուրը, ուսումնական նյութերը անընդհատ թարմացվում-հարմարեցվում են սովորողին: 21-րդ դարում ուսումնական նյութերի հիմնական շտեմարանը հանդիսանում է մեդիագրադարանը, որից օգտվում են ենսովորողն ու ուսուցիչը: Մեդիագրադարանն անընդհատ լրացվում է գրքերով, համացանցային ռեսուրսներով: Ուսումնական նյութեր ընտրելիս և հաձնարարելիս ուսուցիչը նկատի է ունենում նաև սովորողի ընդունակությունները և նախասիրությունները: Կարդում են դասական

[9]Տե՛ս Ջ. Գյուլամիրյան , նշվ. աշխ., Երևան, 2018թ., էջ 133:

ստեղծագործություն, գիտահանրամատչելի նյութեր, տեղեկություններ, խնդիրներ , առաջադրանքներ: Ներկայումս մի փոքր ավելի դժվար է դառնում բավարարել աշակերտի պահանջներն ու ցանկությունները, տալ նրան հետաքրքրող հարցերի պատասխանները: Այժմ ուսուցիչն ավելի մեծ ջանքեր պետք է գործադրի աշակերտի մոտ կարդալու կարողություն ձևավորելու և այն զարգացնելու համար: Այժմ մայրենիի դասագրքերում տեղ գտած գրեթե բոլոր ստեղծագործություններն իրենց մեջ պարունակում են բացահայտ կամ թաքնված մտքեր, որոնք օգնում են կրտսեր դպրոցականներին կռահել կամ ըմբռնել բնագրում ներկայացված դեպքերի զարգացման ընթացքն ու տրամաբանությունը, ուսուցիչը պետք է կարողանա տալ այնպիսի հարցեր կամ առաջադրանքներ, որպեսզի աշակերտը կարողանա կռահել, հասկանալ բնագրի հիմնական գաղափարը, ենթատեքստը: Օրինակ՝ կարելի է տալ այսպիսի առաջադրանքներ. Կարդա՛ տվյալ հատվածը, վերնագրիր այն և հասցրու՛ ավարտին:Կարդա՛ շարունակությունը, ստուգիր՝ ճիշտ էիր կռահել ավարտը:Այսպիսի առաջադրանքների կատարումը նպաստում է աշակերտների մտքի ճկունությանը, ոչ ստանդարդ մտածողությանը, բնագրում արտահայտված կամ չարտահայտված մտքերը հասկանալու կարողության ձևավորմանը:

Այսպես՝ առանձին մասերի ընթերցումից և դրանց վերաբերվող հարցերի պատասխանները տալուց հետո անհրաժեշտ է աշակերտներին հանձնարարել բնագիրը ևս մեկ անգամ էլ սկզբից մինչև վերջ կարդալ: Ավարտից հետո պետք է ևս մեկ անգամ էլ 1-2 հարցերի միջոցով որոշել, թե արդյոք համընկնում է մինչև տեքստի ընթերցումը վերնագրի միջոցով կայացրած որոշումը տեքստի ամբողջական ընթերցումից հետո ստացած տպավորությանը: Անհրաժեշտ է մեկ անգամ ևս ընդգծել բնագրի հիմնական գաղափարը և բնագրի ընթերցումը հասցնել ավարտին:

Չնայած այս երկար ու բարդ աշխատանքին՝ հաճախ կրտսեր դպրոցականների մոտ մարում է սերը ընթերցանության նկատմամբ, այստեղ հարց է առաջանում՝ իսկ ինչպե՞ս, ի՞նչ մեթոդներով կրտսեր

դպրոցականների մոտ ձևավորել սեր և հետաքրքրություն ընթերցանության նկատմամբ :

Հաճախ ենք հանդիպում այնպիսի երեխաների, ովքեր իրենց կարդացածը չեն հասկացել կամ շատ քիչ բան են հասկացել: Այդ ինչպես կարող է աշակերտը չհասկանալ կարդացածը, ի՞նչ կարելի է անել, որպեսզի զարգացնենք նրա ընթերցողական կարողությունը: Վատ հասկանալը հաճախ բացատրվում է շատ պարզ պատճառով. նրանք պարզապես ուշադիր չեն կարդում: Նրանք չգիտեն՝ ինչպես կարդան, որ կենտրոնանան հիմնական մտքերի վրա: Այստեղ ուսուցիչները կարող են կիրառել քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներ ու հնարներ, կարող են օգնել աշակերտներին՝ խորհելու կարդացածի մասին՝ դրանով իսկ բարձրացնելով նրանց ընթերցողական ընկալունակության մակարդակը:

Այստեղ **Ջ. Գյոլամիրյանն ասում է, որ ընթերցանությունն ակտիվ գործընթաց է, որն ընթերցողին ստիպում է մտածել ընթերցվող նյութի և նրա իմաստի շուրջ: Եթե ընթերցողը չի մտածում այն գաղափարների, տեղի ունեցած դեպքերի, կերպարների մենախոսությունների և երկխոսությունների շուրջ, որոնք ներկայացված են ընթերցվող բնագրում, ուրեմն իսկական ընթերցանություն տեղի չի ունեցել: Ընթերցողը պետք է գիտակցաբար ջանքեր գործադրի կարդացածը հասկանալու համար: Եթե ընթերցողը գիտակցում է, որ ինչ-ինչ իրադարձությունների իմաստը լավ չհասկացավ կամ կորցրեց պատմվածքի << թելը>>, ձեռնարկում է ճշգրտման քայլեր՝ վերընթերցում է, չհասկացած հատվածը արագ վերանայում, բառի իմաստը փնտրում բառարանում և այլն[10]:**

Ուսուցիչը կարող է մինչ բնագրի կարդալը մտագրոհի միջոցով աշակերտներին նախապատրաստել բնագրի ուսումնասիրմանը: Կարող են գուշակել ավարտը: Եթե աշակերտները նախօրոք գիտեն, որ պատմվածք են կարդալու, ապա մինչև սկսելը կարելի է վերնագիրն ու նկարներն օգտագործել որպես բանալի՝ պատմվածքի բովանդակությունը կռահելու

[10]Տե՛ս Ջ. Գյուլամիրյան, նշվ. աշխ., 2018թ. , էջ 139:

համար: Այսպես նրանք կանգնում են նյութի ընկալման շեմին: Սա արվում է խթանման փուլում:

Այսպիսի աշխատանքը աշակերտների մոտ հետաքրքրություն է առաջացնում ընթերցանության նկատմամբ, և նրանք ավելի սիրով են ուսումնասիրում բնագիրը:

1.3 Կարդալու տեսակները: Նրանց դերը կարդալու որակական հատկանիշների ձևավորման գործում

Ընթերցանությունը գիտելիքի ձեռք բերման, բազմակողմանի զարգացման, բառապաշարի հարստացման հիմնական աղբյուրն է: Կարդալու միջոցով է հարստանում ու զարգանում աշակերտների երևակայությունը, խոսքը և ճաշակը: Այդ իսկ պատճառով կարևոր է աշակերտների մոտ կարդալու կարողությունների զարգացումը: Ընթերցանության հիմնախնդիրը միշտ էլ արդիական է եղել: Բոլոր մանկավարժներն էլ փնտրել և փնտրում են նոր ուղիներ երեխայի մոտ կարդալու կարողություններ զարգացնելու համար: Ինչպես ասում են <<կարդալ չսիրող, գրքի, հեքիաթի, պատմվածքի ունկնդրման և ընթերցման նկատմամբ ի սկզբանե անտարբեր երեխաներ չեն լինում: Պարզապես անհրաժեշտ է մանկական ընթերցանության մանկավարժորեն ճիշտ և նպատակային կազմակերպում>>: Որպեսզի երեխան սիրի գիրքը և կարդա, պետք է տիրապետի վարժ կարդալու կանոններին: ՈՒսուցիչը պետք է օգնի աշակերտին հաղթահարելու կարդալու ընթացքում առաջացած դժվարությունները: Կարդալու որակական հատկանիշները պետք է ձևավորվեն և զարգանան տարրական կրթության ողջ ընթացքում, այս ուղղությամբ աշխատանքը պիտի շարունակվի նաև հիմնական դպրոցում: Տարրական դպրոցում կարդալու որակական հատկանիշների պահպանմամբ ընթերցելու կարողության զարգացումն ու ձևավորումը իրականացնում են նյութի բազմակի ընթերցանության

ճանապարհով՝ կիրառելով կազմակերպման ինքնատիպ ձևերունեցող տեսակներ:

Մայրենիի դասերի ժամանակ պետք է կիրառել կարդալու բոլոր տեսակները, հաշվի առնելով ստեղծագործության առանձնահատկությունները:

Մայրենիի բնագրերի դասարանական ընթերցումը իրականացվում է մի քանի ձևով՝ **ձայնով** կամ **բարձրաձայն**, **լուռ** կամ **մտքում**, **շարունակելով, մեկնաբանելով** կամ **կանգառներով, ընտրովի** և **դերերով:** Այս ձևերից յուրաքանչյուրն ունի իրականացման որոշակի մեթոդիկա: Տարրական դասարաններում հատկապես արդյունավետ է **ձայնով** կարդալը, կարդալու այս ձևը նպաստում է կարդալու կարողության մշակմանն ու կատարելագործմանը, ինչպես նաև ձևավորում է կարդացածը հասկանալու կարողություն: Այստեղ պրոֆ. Գյուլամիրյանը նշում է մի կարևոր հանգամանք **մտքում կարդալը կրտսեր դպրոցականների համար դժվար է, քանի որ նրանց ուշադրությունը դեռևս կամային չէ, ցրված է, և երեխաներն արագ կարող են շեղվել: Արդյունքում՝ երեխան կարող է մատը տողերի վրայով սահեցնել, սակայն մտքով ուրիշ տեղ լինել**[11]**:**

Ձայնով կարդալը ունի իր տարրատեսակները՝ **բարձրաձայն և ցածրաձայն:**

Բարձրաձայն ընթերցանությունը կոլեկտիվ աշխատանք կատարելու անփոխարինելի ձև է: Այս ձևը միավորում է տվյալ դասարանի բոլոր աշակերտների ուշադրությունը, այն նաև ուղղորդում է ողջ դասարանին՝ կարդալ մտքում՝ հայացքով հետևելով ընկերների ընթերցանությանը և իմաստավորել կարդացածը: Բարձրաձայն ընթերցանությանը տարրական դպրոցում մեծ տեղ է տրվում նաև նրա համար, որ այդ ձևով ընթերցանության գործընթացին մասնակցում են երեխաների ոչ միայն աչքերն ու արտասանական կառույցը, այլև ականջները. ապացուցված է, որ որքան շատ զգայարան մասնակցի ուսուցման գործընթացին, այնքան այդ գործընթացը արդյունավետ կլինի: Ա. Տեր-Գրիգորյանը նշում է՝ <<**Ձայնով կարդալը ոչ միայն մշակում ու զարգացնում է երեխաների կարդալու հմտությունները, այլև սովորեցնում է խոսելու օրգանները, ձայնը և շնչառությունը ճիշտ**

[11]Տե՛ս Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան 2018 թ., էջ 120:

կառավարելու արվեստը, որը կատարելության է հասնում աստմունքողների մոտ>>[12]: Տարրական դասարաններում բարձրաձայն կարդալուն զուգընթաց մեծ նշանակություն է տրվում նաև լուռ կարդալուն:

Լուռ կարդալը մտքում կարդալն է: Այս մեթոդն իրականացվում է ուսուցչի հսկողությամբ (աչքերի շարժումով՝ առանց խոսքի օրգանների մասնակցության): Մտքում կարդալու նախնական կարողությունն սկսում է ձևավորվել դեռևս համադասարանային ընթերցանության ժամանակ, երբ մեկը կարդում է, իսկ մնացածն աչքերով հետևում են : **Մտքում կարդալու նպատակն այն է, որ մինչև ուսուցիչը կբացատրի նյութը, աշակերտը լուռ ընթերցումով կհասցնի ծանոթանալ տեքստի բովանդակությանը և նրա հետ ակտիվորեն մասնակցում նյութի մեկնաբանմանը: Լուռ ընթերցման առավելությունը նաև այն է, որ առանց արտասանական ապարատների մասնակցության, աչքերով կարելի է կարդալ՝ նյութի բովանդակությունն ըմբռնելով յուրովի՝ ըստ անհատի խառնվածքի, նրա անհատական ու տարիքային առանձնահատկությունների[13]:**

Պետք է նախ երեխաներին հանձնարարել շշուկով կարդալ, ապա՝ մտքում: Բարձրաձայն կարդալով սովորողները ոչ միայն չեն հասցնի յուրացնել ծավալուն նյութը, այլև կհոգնեն իրենց ձայնից: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ << **Լուռ ընթերցանությունը մեծ կշիռ է ունենում այն դեպքում, երբ աշակերտը բարձրաձայն ընթերցանության կարողություն ունի>>[14]:**

Շարունակելով կարդալ: Կարդալու այս ձևը արդյունավետ է տարրական դասարաններում: Կարդալու այս տեսակի միջոցով միանգամից կարդում է ամբողջ դասարանը: Պրոֆ. Գյուլամիրյանը նշում է, որ **շարունակելով կարդալու ժամանակ չի կարելի ընդհատել երեխայի ընթերցանությունը և մեկ ուրիշին պատահական հատվածից շարունակել տալ: Անհրաժեշտ է թույլ տալ, որ կարդացողը հասնի մտքի տրամաբանական ավարտին, դեպքի**

---

[12]Տե՛ս Ա. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա(տարրական դասարաններ), ուս. ձեռնարկ մանկավարժական բուհերի համար, Երևան,1980 թ., էջ 151:

[13]Տե՛ս Հարությունյան Ն., Բահաթրյան Ա., Կյանքը և գործը, Ե., համալսարանի հրատարակչություն, էջ 63:

[14]Տե՛ս Բահաթրյան Ա, Համառոտ գործնական հոգեբանություն Թ , Երևան, էջ 161:

նկարագրությանը և այլն, նոր հանձնարարել մեկ այլ աշակերտի՝ շարունակել կարդալը[15]:

Ընտրովի ընթերցանություն: Այս մեթոդի ժամանակ աշակերտն ուսուցչի հանձնարարությամբ առանձնացնում է այս կամ այն գործող անձի խոսքերը, որևէ հատվածը կամ միտքը, դուր եկած տողերը, այդպիսով ընդգծելով այդ անձանց բնավորության գծերը. Հեղինակի կամ ընթերցողի համար կարևոր գաղափարները: Այս մեթոդը նպաստում է լուռ կարդալու ունակության ձևավորմանը, քանի որ ուսուցչի հանձնարարությունը կատարելու համար աշակերտը նախ լուռ է կարդում բնագիրը, ապա որոշում է պահանջվող նախադասությունը կամ պարբերությունը: Այստեղ պրոֆ. Գյուլամիրյանը շեշտում է հետևյալ կարևոր հանգամանքը: **Ընտրովի ընթերցանությունն իրականացվում է նախապես մշակված հարցերի միջոցով , որոնք աշակերտից պահանջում են ոչ թե մեխանիկորեն կարդալ անհրաժեշտ հատվածը, այլ նրան մտածել են տալիս կարդացածի շուրջ, օգնում են մեկ անգամ ևս վերլուծել նկարագրված դեպքերը, հերոսների արարքները, քննարկել, տրամաբանել ու այդ հիմքի վրա նոր ընտրել ու կարդալ բնագրի որոշակի հատվածը[16]:** Ընտրովի ընթերցանության ժամանակ երեխան ծանոթանում է ստեղծագործության հերոսների հետ, հասկանում է նրանց արարքների դրդապատճառները, յուրացնում է նրանց խոսքերը, որոշում է ճիշտն ու սխալը:

Դերերով ընթերցանություն: Այս մեթոդի ժամանակ կարդալուն մասնակցում են մի քանի հոգի: Ամենավատ կարդացողն անգամ դերերով ընթերցելու ժամանակ լավ է կարդում, քանի որ նա ձգտում է ճիշտ արտահայտել գործող անձանց հոգեվիճակը: Դերերով կարդալ պետք է տալ հերոսներով հարուստ բնագիրը, որպեսզի շատ աշակերտներ մասնակցեն ընթերցանությանը: Դերերով ընթերցելը նպաստում է բնագիրը լավ հասկանալուն և արտահայտիչ կարդալուն: Պրոֆ. Գյուլամիրյանը նշում է, որ դերերով կարդալիս պետք է պահպանել մի քանի պայման.

---

[15]Տե՛ս Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան 2018 թ.,էջ 121:

[16]Տե՛ս Ջ. Գյուլամիրյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան 2018 թ., էջ 122:

- **Դերերի բաշխումը կատարել աշակերտների ցանկությամբ,**
- **Որևէ դեր չպարտադրել, եթե աշակերտը չի կամենում այն կատարել,**
- **Երբեք երեխաներին չնմանեցնել հերոսներին**[17]**:**

Բազմակի ընթերցում: Մայրենիի դասի 15-20 րոպեն երեխաները պետք է կարդան, սակայն միևնույն նյութի անընդհատ ու միատեսակ ընթերցումը ձանձրացնում է երեխաներին, այս երևույթը կանխելու համար ստեղծագործության ընթերցումը անհրաժեշտ է կազմակերպել՝ կիրառելով կարդալու բոլոր տեսակները: Այստեղ կարևոր է նշել, որ **բազմակի ընթերցանության ժամանակ երեխաների հետաքրքրությունը բորբոքվում է ոչ միայն բազմաբնույթ առաջադրանքների, այլև ծավալված մտավոր գործունեության նկատմամբ ուսուցչի ցուցաբերած օգնությամբ, հետաքրքրությամբ. ուսուցիչը զգացմունքային, արտահայտիչ միջոցներով դրսևորում է իր հետաքրքրությունն ու անկեղծ վերաբերմունքը երեխաների ընթերցանության և արտահայտած մտքերի նկատմամբ: Նրա հիացմունքը ոգևորում է երեխաներին, և նրանք սկսում են ավելի ոգևորված կարդալ, կարդացածի մեջ նոր իմաստներ տեսնել, դատողություններ և մտահանգումներ անել**[18]**:**

Կարդալու կարողության առանձնահատկություններին և մեթոդական քայլաշարին ծանոթանալուց հետո մենք կատարեցինք հետազոտական աշխատանք պարզելու՝ որքանով է արդյունավետ տարատեսակ մեթոդների կիրառումը կարդալու կարողության ձևավորման գործընթացում: Այդ նպատակով մենք անցկացրինք հարցում տարրական դասարանների մի շարք ուսուցիչների շրջանում: Հարցումն անցկացրեցինք Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Թթուջուր գյուղի միջնակարգ դպրոցի տարրական դասարանների ուսուցիչների, ինչպես նաև մի շարք այլ դպրոցների ուսուցիչների շրջանում: Հարցվողներին առաջադրվել է հարց, արդյո՞ք կարդալու գործընթացի ժամանակ կարդացածը հասկանալի և արդյունավետ

[17]Տե՛ս նույն տեղում, էջ 123:

[18]Տե՛ս Ջ. Գյուլամիրյան , Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան 2018 թ., էջ 124:

դարձնելու համար գործածում եք ժամանակակից մեթոդներ: Այս հարցախույզի պատասխանների բաշխումը բերված է գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1. Կարդացածը արդյունավետ և հասկանալի դարձնելու համար օգտագործու՞մ եք արդյոք ժամանակակից մեթոդներ:



Հարցվածների մի զգալի մասը՝ 59 % պատասխանել են, որ օգտագործում են մեթոդներ, 33 %-ը ոչ միշտ է օգտագործում ժամանակակից մեթոդներ, և 8 %-ը շատ քիչ են օգտագործում:

Մեկ այլ հարցի արդյունքում, պարզ դարձավ, որ ուսուցիչների զգալի մասը դժվարանում են ժամանակակից մեթոդների կիրառման ժամանակ: Արդյունքները տես գծապատկեր 2-ում :



Հարցվածների 70 %-ը գտնում են, որ դժվարանում են կիրառել ժամանակակից մեթոդները , իսկ 30 %-ն էլ գտնում են, որ մեթոդները կիրառելիս ոչ միշտ են կիրառում լիարժեք:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով տեսական և փորձարարական ուսումնասիրության արդյունքները՝ եկել ենք հետևյալ եզրահանգումների:

- Կարդալու կարողության ձևավորումը հոգեկան մի բարդ գործընթաց է, քանի որ կարդալու համար միայն տառերը ճանաչելն ու միմյանցից տարբերելը բավական չեն, պետք է նաև տեսողական տպավորությունները վերածել ձայնական և հնչյունային տպավորությունների:
- Տարրական դպրոցում մայրենիի դասի գլխավոր նպատակը կարդալու բոլոր որակական հատկանիշների պահպանմամբ կարդալ սովորեցնելն է, ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը և ընթերցողական կարողությունների ձևավորումը:
- Ընթերցանությունը տարրական դասարաններում մայրենի լեզվի գործնական ուսուցման, կարդալու կարողության մշակման ու կատարելագործման, գաղափարական ու գեղագիտական դաստիարակության նպատակներ է հետապնդում:
- Ընթերցանության դասը բազմաբնույթ աշխատանքների մի ամբողջ համակարգ է: Այդ ընթացքում լեզվական, ճանաչողական, տեխնիկական ու դաստիարակչական խնդիրները միաձուլվում են, կապվում միմյանց հետ:
- Ուսուցման այբբենական շրջանում ձևավորվում է երեխաների կարդալու նախնական կարողությունը:
- Վարժ և հստակ կարդալու համար կարևոր է հետևյալ հատկանիշների պահպանումը՝ ճիշտ կարդալ, հասկանալով կարդալ, սահուն կարդալ, արտահայտիչ կարդալ, արագ կարդալ: Այս հատկանիշների պահպանմամբ ընթերցանությունը դառնում է ակտիվ գործընթաց:

- Ուսումնասիրել ենք մեր թեմայի հիմնախնդրին վերաբերող գիտամեթոդական գրականություն, որի արդյունքում պարզել ենք, որ

ժամանակակից, ինտերակտիվ մեթոդները ընթերցանության նպաստում են կարդալու կարողության ձևավորմանը:

- Ուսումնասիրելով մեր թեմային վերաբերող բոլոր մեթոդական նյութերը, հասկացանք, որ ժամանակակից ընթերցանության մեթոդները հնարավորություն են տալիս երեխաների մեջ հետաքրքրություն արթնացնել ընթերցանության բուն գործընթացի նկատմամբ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Բահաթրյան , համառոտ գործնական հոգեբանություն, Թ՝ Ե, 1882 թ.:
2. Ջ.Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Ե., 2018, «Զանգակ» հրատ., 341 էջ:
3. Դ. Գյուրջինյան, Ն. Հեքեքյան, Մայրենի 4, Ուսուցչի ձեռնարկ, Եր., Էդիթ պրինտ, 2009թ., 112 էջ:
4. Դ. Գյուրջինյան, Ն. Հեքեքյան, Մայրենի 4, Եր., 2010 թ., Էդիթ պրինտ, 191 էջ:
5. Կ. Թորոսյան, Վ. Սարգսյան, Կ. Չիբուխչյան, Ս. Գրիգորյան, Ե. Ջիլավյան, Մայրենի 2-4, Ուսուցչի ձեռնարկ:Եր., 2011 թ., 272 էջ:
6. Ն. Հարությունյան , Բահաթրյան Ա, Կյանքը և գործը Ե, համալսարանի հրատարակչություն, Եր., 1992 թ, 155 էջ:
7. Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, Եր., 1948, 424 էջ
8. Վ. Սարգսյան, Կ. Թորոսյան, Ս. Գրիգորյան, Հ. Խաչատրյան, Մայրենի 2, Եր., 2010 թ., 160 էջ:
9. Ա. Տեր Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա /տարրական դասարաններ/, ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի համար, Եր, 1980 թ., 564 էջ:
10. Ա. Տեր Գրիգորյան, Մայրենի լեզվի դասը տարրական դասարաններում, Եր., 1983 թ., :
11. Ա. Քյուրքչյան, Լ. Տեր-Գրիգորյան, Մայրենի 2, Ուսուցչի ձեռնարկ, Եր., Էդիթ պրինտ, 2009թ., 84 էջ:
12. Ա. Քյուրքչյան, Լ. Տեր-Գրիգորյան, Մայրենի 2, Եր, Էդիթ պրինտ, 2010թ., 160